

Խմբագրական

ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐՈՒ ՀԱՐՑԸ ԳԵՐԵՎԱՐԱԾ Է ՀԱՄԱՅՆ ԱԶԳԸ

Ապրիլի 8ին Պարուէն Երեբունի օդակայանը հասնող օդանաւոր ժամանեց միայն մեծ յուսախարութիւն քերելով այնտեղ համախմբուած այն հարազատներուն որոնց ռազմագերի ինկած ընտանիքի անդամները պիտի վերադառնային ատրպէյճանական բանտերէն: Ռազմագերիներու հարցը – որ այնքան յուզական եւ զգացական խնդիր է – վերածուած է քաղաքական ուժնազնդակի, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ: աւելի՞ նաև Ռուսաստանի եւ Թուրքիոյ միջեւ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ապրիլ 7ին այնքան ըստատուած հանդիպում մը ունեցաւ նախազահ Վաստիմիր Փուրինի հետ, Սուկուայի մէջ: Այնտեղ քննարկուեցան երկու կողմերը յուզող խնդիրներ. առաջին հերթին՝ Նոյեմբեր 9ին ստորագրուած եռակողմ յայտարարութեան գործադրութեան ընթացքը: Այդ յայտարարութեան 8րդ կէար կը վերաբերի ուազմագերիներու խնդիրն. որոշուած էր գործադրութեան դնել «բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքը:



Երգիծանկար՝ Թոթոյի, յատուկ «Պայքար»ին

Հիմաց» սկզբունքը: Հայաստան անմիջապէս ազատ արձակեց իր հսկողութեան ներքեւ գտնուող 69 ռազմագերիները, ներառեալ երկու ազերի ոճրագործները՝ Տիգրան Ասրարով եւ Շահպատ Կիլիեւ, որոնք դատապարտուած ու բանտարկուած էին պատերազմէն առաջ: Քաղաքական չափազանց լուրջ սխալ մը գործեցին Հայաստանի հշխանութիւնները արտայանձնելով երկու սուրբիացի ճիհատիստներ, որոնք կամ պէտք է փոխանցուին Սուրբոյ պետութեան եւ կամ միջազգային դատարան, իբրև վկայութիւն այն փաստին որ բուրքերը այս պատերազմին մէջ մասնակից դարձուած էին միջազգային ոճրագործները:

Սակայն, նկատի ունենալով որդեկորուստ ընտանիքներու վիշտն ու տառապանքը Հայաստանի իշխանութիւնները աճապարած էին բոլոր ուղմագերիներու արտայանձնումը, ակնկալելով որ փոխադարձութիւնը եւս պիտի ըլլար ամրողջական: Հիմա սակայն շատ ուշ է՝ երբ ազգովին ինկած ենք թշնամին ծուլակը:

Անչո՞ւ այնքան կարեւոր էր Սպրիի 8ին հասնող բռիչքը. պատճառը այս էր որ նախազահ Փութին խոստացած էր Հայաստանի վարչապետին փութացնել աշխատանքները գերիներու ազատազրման հարցով։ Այս հաւաստացումին հետեւեցաւ ոուս խաղաղապահ ոյժերու հրամանատարին՝ Զօր. Ռուսան Մուրաստովի այցը Պաքու, զօրացնելով Ենթադրութիւնները որ ան իր հետ Երեւան պիտի բերէ հայ ոազմագերինները։ Սակայն, Պաքուէն Երեւան հասնող օդանաւէն կ'իջնէ միայն Զօր. Մուրաստովը, որ կը մեղադրէ հայկական իշխանութիւնները որ թիրիմացութեան մատնած են ոազմագերիններու ընտանիքները, որովհետեւ իր այցը Պաքու առնչութիւն չուներ ոազմագերիններու խնդրին հետ։ Արդարեւ, նախքան օդանաւին Երեւան ժամանելով վարչապետի խօսնակ Մանէ Գերզեան յայտարարած էր թէ Պաքուէն ժամանող օդանաւը ոազմագերիններ պիտի փոխադրէ։ Ներկայիս Ասրագեյձանի մօս պահուող ոազմագերինները մեծ մասամբ Շիրակի շրջանէն են։ Յուսախարուած ընտանիքները պաշարած են Պաշտպանութեան նախարարութեան շենքը եւ փակած են Երեւան-Կիւմրի ճամքան։

Երեւանի իշխանությանները 220 ռազմագերիներուն 90 տոկոսին տուեալ-ները յանձնած են ատրաքյանական կողմին:

Ասրագյանի արտաքին գործոց նախարարը՝ Շեյխուն Պայրամով յայտարարած է Իսլամական կազմակերպութեան խորհուրդի քարտուղար Ահմատ Էլ-Օսայմիի հետ կայացած ասուլիսին թէ Ասրագյան Հայաստանին յանձնած է բոլոր ռազմագերիները, աւելի քան 70 հոգի, աւելցնելով որ 62 հոգիներ ալ ծերբակալուած են 2020ի Դեկտեմբերին. անոնք կը նկատուին «ահարբեկիչներ» որոնք պիտի դատուին ատրագյանական օրէնքով: Ըստ ազերի պաշտօնատարին ռազմագերիներու հարցը փակուած է: Միեւնոյն վճռական հաստատումը կատարած էր առողին Ալիել:

Այսպիսի լավիր դիրքաւորում մը առաջին հերթին ապտակ մըն է Ռուսաստանի նախագահին, որ խմբազրած եւ ստորազրած էր Նոյեմբեր 9ի սպառապարագիրը:

Այնպէս ինչպէս պատերազմի կազմակերպումն ու գործադրութիւնը ժուրդիոյ նախաձեռնութեան ներքեւ էին, այնպէս կը բովի թէ ուազմազերհեռու հարցը եւս կրնայ լուծուիլ ժուրդիոյ եւ Ռուսաստանի միջեւ կա-

տարուելիք խօսակցութեամբ մը, որուն ընթացքին բրբական կողմը կը փորձէ խլել նոր զիջումներ Ռուսաստանէն, կամ, անոր միջոցաւ՝ Հայաստանէն:

Ի դեպ, կարծէք բաւարար չըլլային վիշտն ու ցաւը ուազմագերիներու ընտանիքներուն, յանկարծ լուր տարածուեցաւ Հայաստանի մէջ որ Զօր. Մուրասովի օդանաւով Հայաստան ժամանած էին թուրք եւ ասրապէյ-ճանցի մասնագէտներ, ձեւաչափելու համար Սինիքի մէջ գոյանալիք անցըք: Սակայն, Հայաստանի իշխանութիւնները հերքեցին լուրը, յաել-եալ յուզում չպատճառելու համար վիրատր հանրութեան: Լուրը հաւաս-տի թուած էր այն պատճառով որ Ալիեւ պաշտօնապէս յայտարարած էր այդ անցքին շինարարութիւնը, որ պիտի կապէր Ասրապէյճանը Նախիջե-ւանի Ինքնավար հանրապետութեան: Աւելին՝ ան յոխորտացած էր որ ինք պիտի պարտադրէ Հայաստանին որ այդ անցքը կառուցուի, համա-ճայն Նոյեմբեր 9ի յայտարարութեան, որուն 8րդ կետը տակաւին կը մերժէ գործադրել ասրապէյճանական կողմը:

Թթրական աղքիրներ, իրենց հերթին, յայտարարած են որ շուտով Սինիքը պիտի միանայ թթրական աշխարհին: Մենք հայու դիրահաւա-սուրբնամբ կրնանք անկարելի նկատել այդ հեռանկարը, սակայն, թթրա-կան կողմը ամէն նշան եւ ազդարարութիւն կը կատարէ պատրաստուելու համար այդ օրուան: Օրինակ ինչո՞ւ այս օրերուն թուրք-ատրպէյճանա-կան գօրքեր ուազմափորձեր կը կատարեն Հայաստանի սահմաններուն վրայ: Ցունուարէն ի վեր չորրորդ ուազմափորձերն են որոնք կը կատար-ին. որո՞ւն դէմ են այս պատրաստութիւնները. չէ՞ որ թուրք-ազերի ճա-կատը պարտութեան մատնեց հայկական կողմը եւ գրաւեց հողերը: Ի՞նչ բանի նշան են այս պատրաստութիւնները:

Համապատասխան կերպով ալ ոռուսական կողմը պարզած է իր դրօշը Սինիքի մէջ եւ կը զօրացնէ իր բանակը այդ շրջանին մէջ, որովհետեւ, Սինիքին կորուստը մահացու հարուած մը պիտի ըլլայ Հայաստանին եւ քաղաքական հսկայ պարտութիւն մը Ռուսաստանին: Արդէն, Մուկուան անպատճակը զիջումներ կատարած է Կովկասի մէջ, թրքական ճնշումի դիմաց եւ կը պատրաստոի նոր բախումի Խրիմի ճակատին վրայ: Ռուսաստանի նոր տեղատուութիւնը կրնայ ճակատագրական անկումի մը նախանշանը դառնալ: Հետեւարար, Հայաստան կենսականօրէն կը մտահոգուի Սինիքի ճակատագրով, սակայն Ռուսաստանի համար եւս աւելի քան խորհրդանշական փոփոխութիւն մը կրնայ հանդիսանալ Կովկասի մէջ ունէ այլ ռազմական տեղաշարժ:

Հայաստանի համար զարդուրելի կորուստ է 5000 երիտասարդներու մահը եւ 10,000 հաշմանդամներու բեռք, որուն վրայ կու զայ աւելնալ ուզմագերիներու խնդիրը, որ հոգեկան մաշումի յաւելեալ ազդակ մըն է։ Սակայն հայոց ցաւը այնքան կշիռ չունի ոռու-թրքական յարաքերութեան մէջ որ շատ աւելի մեծ, միջազգային տարողութեամբ ազդակներ կը ներզործեն։

Ծիշը է որ հայկական կողմը լուրջ լծակներ չունի ազդելու համար գերիներու հարցին վրայ, քանի առանց վերապահութեան այդ լծակները յանձնած է թշնամիին: Ուազմագերիներու փոխանակումները կը կատարուին Միջազգային Կարմիր Խաչի կամ ՍՍԿի միջոցաւ: Հայկական կողմը պէտք չէր հաւատը ընծայեր բուրքական կողմին, կամ այսիսկ ուստական կողմին, պահանջելով որ երկու կողմերու ռազմագերիները համախմբուին չէզոք երկրի մը մէջ, Կարմիր Խաչի հսկողութեան տակ եւ երբ իրականանար «բոլորը՝ բոլորի դիմաց» սկզբունքը, այդ պահուն փոխանակուէին ռազմագերիները:

Այսօր գործի վրայ են Հայաստանի, Ռուսաստանի և Ատրպէյճանի փոխ-վարչապետները գործադրելու համար համաձայնութեան կէտերը: Հետեւաբար տակաին Հայաստան ունի որոշ հակակշիռ՝ որապէս պատասխանելու Ատրպէյճանի որական քայլերուն:

Այլապէս, պէտք է ունենայ հասկացողութիւնը իր ռազմագիտական դաշնակիցին՝ մերժելու զիջումները Ատրպէճանի Ժխտականութեան դիմաց:

Պատասխանատու խմբագիր՝	Երուանդ Ազատեան (Տիթրոյթ)
Գործադիր խմբագիր՝	Յակոբ Վարդիվառեան (Նիւ Ճըրզի)
ԽՄԲԱԳԻՐԱԿԱՆ ԿԱԶՄ	
Տոքթ. Յարութիև Արգումանեան	(Մոնթրէալ)
Յակոբ Աւետիքեան	(Երեւան)
Պայծիկ Գալայճեան	(Պէյրութ)
Զաւեն Գրիգորեան	(Աթէնք)
Հայան Մանուկյան	(Հայան Մանուկյան)

Page 1

**Baikar Association Inc.
755 Mt. Auburn Street
Watertown, MA 02472 U.S.A.
E-mail: baikarweekly@gmail.com
Tel: 1-201-406-9771
Fax: 1-201-661-8722**

Հայաստանի Հնտրութիւններին Ընդառաջ

Արդեն տեսական ժամանակ երկրում ստեղծուել է մի իրավիճակ, երբ ուղղակի ոչ որ չի հասկանում, թե իրականում ինչ է կատարում: Ակսենը նրանից, որ ընդդիմութեան ընդդիմութիւնն աւելի ուժեղ դուրս եկա. Աղմուկա-դաղակներին, խրոխտ կեցուածքով երթերին ու կրակուտ ճառերին յաջորդեցին անորոշ դադարն ու Թաղրամեանի բռոր առումներով լիցքաթափումը Միակ որոշն այս անորոշութեան մէջ արտահերթ ընտրութիւնների մասին յայտարարութիւնն էր ու Սահմանադրական դատարանի որոշումը 301-ու յանցակապմի բացակայութեան մասին:

Սրա դեմ ոչինչ չունեմ ասելու, սակայն երեք տարում նո՞ր միայն կարողացաւ բացագալութեամ աւագա։ Սրա դեմ ոչինչ չունեմ ասելու, սակայն երեք տարում նո՞ր միայն կարողացաւ բացագալութեամ ասալու։ Ու այդ յանցակազմը չկայ, թե՛ դրա տակ մի նոր խարդախնդիր ու գաղտնի պայմանաւորուածութիւն կայ։ Ծգիտեմ, ժամանակը ցոյց կը տայ, բայց վստահ եմ, որ իշխող վարչախումբն ամեն ինչ կ'անի, որպեսպիս իշխանութեան մնայ։ Ի հարկէ, նա իշխանութիւնը կարող էր պահել նաեւ առանց ընտրութիւնների՝ մեծամասամբ ընդդիմութեան սխալ ռազմավարութեան կամ դրա բացակայութեան պատճառով։ Սակայն իրականում որպեսպիս ապագայ որոշումները կայացնելու համար նրանք օրինականութեան նոր աստիճան չենք բերեն, արտահերթ ընտրութիւններն աւելի քան անհրաժեշտ են։ Վերջիններիս թիւ թէ շատ ճանաչելով կարող ենք կանխատեսել, որ այս անգամ ամեն ինչ կանեն գոռակիցին կառավարութիւն չեւարուելու համար Զանի որ դա հրաշակի միջոց կը լինի ինարաւոր ճակատագրական որոշումների կայացման հարցը ապակենտրոնացնելու եւ ինարաւորինս շատ պատասխանատուններ ներգրաւելու համար։ Արդեն փորձը ցոյց է տուել, որ նրանք սիրում եմ իրենց գործած սխալները այլոց վրայ քարոզե։ Կարելի է գործակեցնաեւ, թէ ապագայում ինչ որոշումներ ստիպուած կը լինեն կայացնել ՀՀ իշխանութիւնները եւ թէ օրինականութեան ինչ աստիճան անհրաժեշտ կը լինի նրանց դրա համար։ Ինչու ապագայում, քանի որ իշխանութեանն այսօրուակարգավիճակում բախտորոշ պայմանագրեր դժուար թէ հարկադրուեն, քանի որ թշնամին լաւ գիտի, որ այսօրուայ իշխանութիւնների ստորագրած ուժեւ թույլ վաղը կարող է առ ոչինչ դառնալ, այդ իսկ պատճառով սրանց պէտք է օրինականութիւն ստանալու եւ միանչնեայ պատասխանատուութիւնից խուսափելու հնարաւորութիւն տալ։ Այս դեպքում նաեւ պարզ է դառնում ամեն անգամ ինչող այն հարցի պատասխանը, թե՛ ուրիշ էլ ի՞նչ փաստաթղթեր կան ստորագրուած, որ մենք չգիտենք։ Ինչպէս նաեւ յստակ է դառնում, որ վեցամսեայ ժամկետի բուն նպատակը հասարակութեանը մոլորութեան մէջ պահելու իրավիճակը վերլուծելու, գերլարուած մքնուրուտը լիցքարագիտելու եւ իշխանութիւնն ամեն գնով պահելու նոր ռազմավարութիւն մշակելու համար է։

Սի շատ կարենոր հանգամանք էլ կայ՝ «Երբ չեն կարողանում գրոհել մտքի վրայ, գրոհում են մտածողի վրայ» (Պոլ Վալերի): Այսինքն՝ այդ ժամանակը՝ առանց միջոցների մեջ խտրականութիւն դնելու (հետապնդումներ, շանտաժ, կաշառք, կոմպրոմիս, ոստիկանին բարձր «ռոնիկ») կ'օգտագործուի նաեւ «պինդ կորիզները կոտրելու», նրանց հեկ ու խոնարհ դարձնելու համար: Այսպէս մտածելու առիթ տուեց «Ես չգիտեմ, թէ որտեղի՞ց է գալիս այդ թշնամութիւնը» միտք-հարցականը: Թանի որ բոլորովին էլ քայառուած չի, որ այն արտայայտողը շուտով կը տայ համաշանութիւն հայ եւ թուրք պատմարանների յանձնաժողովի ստեղծմանը՝ դրանով իսկ տասնամեակներով ապացուցուած եւ քազմաքի պետութիւնների կողմից ճանաչուած Մեծ Ծղեռնի թեման Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգից հանելուն եւ «գիտական» անպտուղ քննարկումներ ծալալելուն: Աստուած իմ, իիմա եմ ամբողջութեամբ ընկալում, թէ ինչու՛ էր Նժդեհն ասում, որ հարկաւոր է բուժել մեր ժողովրդին... Սիարոն Ադիբեկեանն էլ յայտարարում, թէ մեր ժողովրդի մօռպակասում է որշութիւնը:

Ըարեկամներից Խաչիկ Դադայեանը սիրում է կրկնել, որ փաստը պատմութեան Արքան է. բայց միապետը յաճախ մերկ է լինում, ինչպէս ցուցափեղ կի «մանեկեն»ը: Հարկաւոր է զգեստ հագնել մանեկենին, այսինքն՝ պատմական ստոյգ, բայց չոր փաստերին շունչ հաղորդել: Բոլորովին ել գաղտնիք չի որ տեսական ժամանակ Արեւմուտքը խնդիր է դրել Վրաստանում ու Հայատանում թուլացնել Ռուսաստանի հետ յարաբերութիւնները եւ «առկել» վերջիններիս նրանից: Հենց դրա համար իշխանութեան բերեցին Սահակաշուիլիին եւ Նիկոլ Փաշինեանին: Արդինքում Վրաստանը կորցրեց Արխավիան եւ Օսեթիան, իսկ Փաշինեանը պարտութիւն կրեց եւ զիջեց Արցախի մեծ մասը Սակայն, եթե վրացիների եւ Վրաստանի համար խնդիր չէ այդ ամենից յետոյ՝ Թուրքիայի եւ թուրքերի տիրապետութեան տակ յայտնուելը, Հայատանի համար՝ դա կը նշանակի պետականութեան կորուստ: Սա պէտք է ելակետ դառնայ մեր իրատես բոլոր քաղաքական ուժերին, որպէսզի նրանք ընտրութեան զնան միայն լիարժեք յաղթանակի համար: Հակառակ դեպքում այս իշխանութեան վերարտադրութիւնը կարող է կործանարար լինել մեր պետականութեան գոյութեան համար: Նրանք պէտք է յստակ գիտակցեն, որ վարչախումբն ընտրութիւնները 100%-ով կեղծելու է: Իսկ դրանից յետոյ անգլոսարսերը համեստօրէն կը լուեն, թուրքերը՝ կը հրճուեն, իսկ մենք ել կը բռնենք գաղթի համֆան:

Ինչ վերաբերում է ընտրական բարեփոխումներին, ապա դա ընդամենը անհմաստ աշքակապութիւն է (գույք նաև՝ ընտրական գործընթացը չգազգելու եւ ժամանակ շահելու լրացուցիչ պատրուակ): Անցած տարիների փորձը ցոյց տուեց, որ որքան շատ ենք դրանք բարեփոխում, այնքան ընտրութիւններն աւելի անարդար են դառնում: Պարզապես ամեն անգամ գերխնդիրն ու հիմնական նպատակը վարչական ռեսուրսների անթաքոյց օգտագործելու չգտում-

■ Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

ՍՈՒՐԵՆ Շ. ՄԱՐԳԱՏՅԱՆ, ՓՐՈՖԵՍՈՐ

Մոլուցը է: Սա գիտակյելով կուգահեռ շատ կարեւոր է նախընտրական հիմնադրամներին ու, ընդհանրապէս, գործընթացներին օլիգարքներին մօս թողնելը բացառէլը: Ըստի որ նախ՝ նրանք վճարելով պատուիրում են նաեւ արդինքներն ու ընդհանրապէս ամբողջ երաժշտութիւնը, յետոյ Ել ամեն ինչ անում են այդ գումարները ժողովրդից քառապատիկ չափերով կորպւելու համար: Ընդ որում, նրանք դիմում են ունեն դիրքը բացառելու պատրուակով, միեւնոյն գործարարը չենական ստեղծում է հարիւրաւոր՝ իր միմեանց հետ որեւէ կապ չունեցող ընկերութիւններ եւ դրանց հաշիներից գումարներ փոխանցում նախընտրական հիմնադրամներին եւ այլն:



Այս իրավիճակում կարծում եմ նաեւ, որ հարկաւոր է աշքաթող չանել Սփիտքին, որին 1990-ականներից սկսած յիշել ենք բացառապես այն ժամանակ, երբ փողի կարիք ենք ունեցել: Գտնում եմ, որ այդ վերաբերմունքն արմատապես պետք է փոխուի, նրան ել ինչ որ չեւերով մասնակից դարձուի Հայաստանի կեանքին, քանի որ գնալով Սփիտքն արեւի տակ հալուող չեան պես աստիճանաբար մաշտում անեանում է. դառնում անդեմ, իսկ վերջին դեպքերից յետոյ նաեւ՝ խոռված զանգուած: Ծմոռանանք, որ Արցախի ու Հայաստանի վիճակն ուղիղ համեմատական է Սփիտքի վիճակին: Որ այդ նոյն Սփիտքն ուժեղ էր ու հապատ հզօր Հայաստանով ու Արցախով եւ... հակառակը: Հարկաւոր է մԵկընդմիշտ յիշել, որ այսօր արդեն Սփիտքի գործարարը մեկ վստահելու խնդիր ունի: Խսկապէս, երբ իր նուիրաբերած միջոցներով կառուցուած ճանապարհները, ջրատարները, դպրոցները, թանգարանները, տնկած հրաշք այգիները, հացանատ դաշտերը... մնացին թուրք-ազերիներին..., երբ հանգանակած գումարները հասցեատիրոջ հասնելու փոխարեն դառնում էին պարգևնավարներ...., ինչպէս վստահի: Խսկ օրինակներն այնքան շատ են, որ թուղթը անգամ ամօթից կը կարմրի...

Յայտնի իրողութիւն է, որ դարերի ընթացքում ցանկացած նուածող, եթե արշաւում էր Հայաստան, առաջին գործը համարում էր ապնուականութեան բնաջնջումը: Այդպէս են վարուել թէ՝ արաբները, թէ՝ պարսիկները, թէ բիւզանդացիները՝ (Յուստինիանոսի բոլոր ոեփորմներն ուղղուած էին հենց ապնուականութեան դեմ), թէ՝ թուրքերը, իսկ ամենասեւ գործը կատարեցին մոնղոլները: Այդ ամենի արդինքում 13-14-րդ դարերից սկսուեց հայոց պատմութեան ամենառոբերգական շրջանը եւ նա այլեւս չկարողացաւ ուշքի գալ, քանի որ վերացել էր երկրի տերը...Պատմութիւնը, առաւել՝ հայոց պատմութիւնը, կրկնուելու բնոյթ ունի, ուստի այսօր մեր պետութեան գերխնդիրը պետք է լինի նաեւ երկրի տէրերի խաչի վերականգնումը: 1918-1920 թթ. Առաջին հանրապետութեան ժամանակ այդտեսակ գործընթացի ծիլեր նկատուեցին յատկապէս կրթամշակութային ասպարեզում՝ Հայաստան վերադարձան զգալի թուով ապնուական մտաւորականներ, քայլ բոլշեվիկեան իշխանութեան հաստատումով գործընթացը խաթարուեց: Որոշ տեղաշարժ նկատուեց վերանկախացման առաջին տարիներին: 1990-94 թթ. արցախեան ճակատու գրիուածներն իսկական ապնուական տղաներ էին, երկրի ցեղային յատկանիշներ կրողներ, որոնց օրգանական շարունակութիւնը եղաւ 18-20 տարեկան մերօրեայ հերոսները, քայլ, ցաւօք, նրանց մեծ մեծ մասը նահատակուեց: Վստահ եմ, այսօր էլ կայ նման խաւ, նրանց գեներում առողջ սերմ կայ, սակայն հարկաւոր է ուղղակի այն խրախուսել-աթեցնել: Սակայն, ցաւօք սրտի՝ մեկանում հակառակն է արտում եւ եթէ այսպէս շարունակուի եւ միայն ծառայի հոգեբանութիւն քարոզուի, ինչպէս արտում է, մեր ապագան կը դառնայ մշուշոտ, որովհետեւ ծառան բոլորի համար ծառայ է, տէրն է, որ պետութիւն ու ապօք է պահում:

Այս հենքի վրայ այսօր դիմութիւն-Ընդդիմութիւն, սեւ-սպիտակ, նախկին-ներկայ, իրեշտակ-սատանայ կը նոյնանան, եթէ չիրաժարուեն աթոռակորի մղելուց, չաթափուեն իսկապէս ու չպայքարեն ազգային այնպիսի արժեքների համար, ինչպիսիք են հայրենիքի իրական զգացողութիւնը, ազգի ինքնազի-տակցութիւնը, պետականութիւնը որպէս մեծագոյն արժեքի Ընկալումը, երկրի տիրոջ զգացողութեամբ օժտուած ազնուական սերնոյի փշրանքների պահ-պանումն ու հօրացումը եւ, ամենակարեւորը՝ ապագայ յաղթանակների նկատ-մամբ հաւատի պերմանումը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՆ «ԱՔՈՐՏ»Ի ՆԵՐՔԵՒ.

ՓԱԾԻՆԵՎՇ-ՔՈԶՎՐԵՎՈ «ՄԵՆՎԱՋՐՏ»Հ ԸՆՏԵՇՔ ՊԻՏԻ ՎՐՆԵ

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

Կիրակի 28 Մարտին հեռախօսաւ չեղ լոեր: Պատճառն այն է, որ Նիկոլ Փաշինեան մեկնելով Արմափիք եւ հանդիպելով իր աջակիցներուն ենտ կը յայտարարէր, որ յառաջիկայ այս ամսուան ընթացքին (Ապրիլ ամիսն ի նկատի ունիմ անշուշտ) պիտի ներկայաներ իր հրաժարականը:

Փաշինեանի կողմէ հրաժարական տալու չենակարգը ամրագրուած դրոյք է սահմանադրութեան հիմրով եւ ատոր շնորհի է նաեւ, որ երկրի Ասգային Ծողովք կամ Խորհրդարանը պիտի յորով եւ անկէ ետք ալ կայացուին արտահերթ ընտրութիւններ:



Ի դեպ գալիք արտահերթ ընտրութիւնները վերջին տարիներուն երկրորդ պիտի ըլլան 2018 թուականի 9 դեկտեմբերին կայացուած ընտրութիւններն ասդին, երբ Փաշինեան ստիպուած կ'ըլլար ամեն ճիգ ի գործ դնել, որ պիտի կազմէ իրեն համար «օրէնսդրական թիկունք» համարուող խորհրդարան մը, որ առաւելաբար փայեցաւ, որպէս անգործունեայ եւ վարչապետին համար «կամակատար» եղող խորհրդարանի կազմ մը:

Իսկ գալով անցեալ կիրակի օրուան հեռախօսապանգերու մեծ տարափին, ապա սկսմ, որ արաբական աշխարհի տեղեկատուական աշխարհի շարք մը մեծերը (օրինակի համար «Ալ ճապիրա», «Սրայ նիւպ արապիա» եւ այլ կայանեան) ժամանակ չեին կորսակներ լուսաբանութիւններ խնդրելու Փաշինեանի իր պաշտօնեն հրաժարելու վերաբերեալ կատարուած յայտարարութեան մասին: Արաբական աշխարհին մէջ Հայաստանի հանդեպ ստեղծուած այս հետարքութիւնը միայն չ'առնչուիր մեր մօտ եղած պատեարզմին հետ, այլ նաեւ Հայաստանը կը դրուի, որպէս բաւականին թեժ կովկասեան զարգացումներով լեցուն տարածի կարեւոր բաղկացուցիչ մաս, որ նաեւ իր մէջ կը բովանդակէ Երան-Ռուսաստան- Թուրքիա փոխորդակցութիւնը, Պարու-ԱՄԷ-Նիւրուպա կազմ պայքարը, բայց մանաւանդ Իրան-Միացեալ Նահանգներ բուոն պայքարը, որ յաճախ ալ կը դրսեւորուի բաւականին անյստակ, բաւականին անորոշ եւ նոյնիսկ անսպասելի մանրավեպերով:

Ամեն պարագայի տակ այսօր արդէն բոլորին համար աւելի քան յստակ է, որ Փաշինեանի «չենագրով» եւ ներկայութեամբ տեղի ունեցող բաղարական գործնաբանները անմիջականորեն կապ ունին Կովկասի մէջ տեղի ունեցող եւ դեռ ալ տեղի ունենալիք զարգացումներուն հետ:

18 Մարտին, երբ Փաշինեան կ'ընդուներ Բարգաւած Հայաստան Կուսակցութիւնը Արածնորդ Գագիկ Շառուկեանը, եւ հանդիպման աւարտին յունիսը կը յայտարարուէր, որպէս արտահերթ եւ «սպասուած» ընտրութիւններու օր քաղաքական շրջանակներուն համար կարեւորագոյն քննարկման նիւթ կը դառնար ընտրական օրէնքի խնդիրը, որովհետեւ մինչ այր եւ տարբեր մակարդակներու վրայ իշխող քաղաքական ոյժ հանդիսացող «Իմ քայլը» յայտարած էր, որ ամեն ինչ պիտի ընէ մշակելու եւ ընդունելու համար ընտրական նոր եւ «փուելական» օրէնք մը:

Զանազան պայմաններու բերումով, եւ տարուան մը սպասումներէ ետք պարզուեցաւ, որ իշխող մեծամանութիւնը չկարողացաւ նոր օրէնք ընդունիլ ու այսօր երկրին մէջ տեղի ունեցած թեժ զարգացումներէն ետք հասած է օրը, որ այր նոյն ոյժը պատասխան պիտի տայ հանդիպեան առջեւ:

1.Օ՛՛ ինչ օրէնքով պիտի կայացուին ընտրութիւնները:

2.Արենօր կարելի պիտի օլայ բարեփոխումներու ենթարկուած ընտրական օրէնքը կիրառել (օրէնքներու գործադրութեան ժամկետը հաշուի առնելով):

3.Ամենակարենոր այօրուան իշխանութիւնները տեղ պիտի կարողանա՞ն աւելի յարմար, աւելի արդար եւ աւելի խուելական օրէնք մը մէջտեղ հանել:

Ծիշդ է, որ տակաին կանուխ է այս հարցուներուն յատակ պատասխաններ ունենալ, բայց բաղարական բոլորին ետին առկայ խօսակցութիւնները ցոյց կու տան, որ գալիք ընտրական օրէնքը շատ պիտի շտարբերի հինեն (որ բայց Սերժ Սարգսեանն եւ անոր կուսակիցներն ընդունելի օրէնք մը չէր, միւս կողմերուն համար) եւ գլխաւոր ու շատ հաւանական տարբերութիւնը պիտի ըլլայ այն, որ ընտրութիւնները ի հեճուկս իին օրէնսկարգին կայացուին համամասնական հիմքերով ու նաեւ մէկդի նետելով բաւականին խնդրայարոյց հանդիսացող՝ ռէյշինկային (վարկանշային) ընտրական կարգը: (*)

Այս բոլորին կուգահեռ հաշուի պէտք է առնել նաեւ, որ այսօրուան դրութեամբ գործող իշխանութիւնները (ինչպէս միշտ ալ եղած է Հայաստանի պարագային) ու տարբեր հանգամանքներու բերումով պիտի ունենան բաւարար ներոյժ (եւ վարչական լծակներու ու նաեւ տարբեր գործուներու կուտակումով) պիտի ունենան մեծ առիթ ապահովելու համար այսօրուան մեծամաս-

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

նութեան ընդհանուր պատկերը, հակառակ անոր, որ այսօր առկայ մեծամասնութիւնը կրնայ ենթարկուի նոր չենափոխումներու:

Յատակ է նաեւ, որ քաղաքական պրիմարկով դիտուած Փաշինեան պիտի փորչէ իր քաղաքական խումըր «պատուաստել» նոր դէմքերով, որոնց կողքին ալ շատ հաւանաբար ոյժ տալով, իր հետ ներկայիս գործակցող խորհրդարանական եւ կամ արտախորհրդարանական կարգ մը դէմքերու, որոնք արդէն ալ ապդանշանը տուած են ընտրութիւններուն մանակցելու նոր հրապարակ ելորդ քաղաքական կուսակցութիւններու համրով:

Իսկ Փաշինեանի իշխանութեան դէմ պայքարելու համար հրապարակ պիտի գան ներկայիս խորհրդարանին մէջ երկրորդ եւ բրորդ դիմքերը գրաւող Գագիկ Շառուկեանի առաջնորդած «Բարգաւած Հայաստան»ը եւ Էտմոն Մարութեանի դեկավարած «Լուսաւոր Հայաստան» կուսակցութիւնները, իսկ արտախորհրդարանական քաղաքական ուժերու պարագային քնականաբար հրապարակ պիտի գան արմատական ընդդիմութիւն համարուող «17 կուսակցութիւններ»ը, որոնց գլխաւոր առաջնորդը պիտի դառնայ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպարեանը:

Այստեղ անշուշտ տակաւին կան, որոց անյստակութիւններ ու այդ առումով ալ մօտիկ յառաջիկային երեսեի կը դառնան որոց յստակեցումներ, սակայ մեծ հաշուու Հայաստանի մէջ օլայիր պայքարը, մէկ կողմէ Փաշինեանի եւ անոր սատարող ոյժերուն եւ միս կողմէ Քոչարեանի եւ անոր շուրջ համամարդաներուն միջեւ պիտի օլայ:



Ուստանեն արշագանգ. Քրեական օրէնքի թի 300.1 յօդուածի չեղարկումը եւ Փաշինեանի ոչ պատահական յայտարարութիւնն ահպի կը չորնար Հայաստանի քրեական օրէնսգրի թի 300.1 օրէնքի չեղարկման լորին մէլանը, արագօրէն արշագանգ մը կը լուտէր ուստաստանեան «Քոմերսանթ» պարբերականնեն, որ կը համարուի քրեմի կարեւոր բարձրախօսներէն մին: Թերթը կը գրէր, թէ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի մասին յայտարարութիւնն, պարզապէս իշխանութեան նեկին մնալու համար է ու նկատել տալով, որ «Հայաստանի վարչապետը առաջին անգամ յայտարարած է իր հրաժարականի ժամկետի մասին. ան մտադիր է այդ քայլին երթար ապրիլին: Ի հարկէ, այդ քայլը քնա չի նշանակեր, որ ան կը հեռանայ բաղաքական քեմահարթակէն. հրաժարականը պէտք է միայն արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ նշանակելու համար, որոնց իշխող «Իմ քայլը» կուսակցութիւնն մտադիր է մասնակցի եւ յաղերէ:

Թերթը կ'ընդգծէր, որ արմատական ընդդիմութեան ներկայացուցիչները ընդունած են Փաշինեանի մարտահրաւերը՝ յայտարարելով, որ ընտրութիւնները պէտք է փոխակերպուին «Հայենիքի փրկութեան եւ դաւանական հեռացման ընդհանուր ծրագրի»:

Պարբերականը նաեւ նկատել տուած էր, թէ Փաշինեանի հրաժարականը քարդ, բայց անխուափելի ճանապարհ է պիտի ունական կարգի համար, որու իշխող իշխուական նշանակման ընթացակարգը կարգավոր կը դառնայ Հայաստանի հեռացման մասնական համար:

Կը խօսուէր նաեւ վերջերս չեղարկուած Հայաստանի քրեական օրէնսգրի թի 300.1 օրէնքի չեղարկման մասին, ուր կ'ըստուէր՝ «Նիկոլ Փաշինեանի հրաժարականի մասին յայտարարութենեն առաջ, Հայաստանի մէջ տեղի ունեցած է մէկ ալ կարեւոր իրադարձութիւն: Աղմկայարոյց քրեական գործը, որու ծիրէն ներս Փաշինեանի գլխաւոր բաղաքական մրցակիցը՝ Հայաստանի նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեան, եւ ՀՀ քանի մը այլ նախկին բարձրաստիճաններ մեղադրուած են «սահմանադրական կարգի տապալման համար», յայտուած է փլուզման եկրին նկատել տալով, որ այդ տեղի ունեցած է երկրի Սահմանադրական դատարանի որոշումով, ըստ որուն Քրեական օրէնսգրի համապատասխան յօդուածը կը հակասէ հիմնական օրէնքին: Եւ այդպիսով

1916 ԹՈՒԻ ՍԱՅՔԱ-ՓԻՔՈՅԻ ՀԱՄԱՁՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՅՍՈՐՈՒԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ


Ցանկություն «ԴԱՅԱՎՈՐ» հետո

Սայքս-Փիռոյի Համաձայնութիւնը կամ Փոքր Ասիոյ Համաձայնութիւնը կնքուած է 1916 թ. Սայիս 16-ին: Այն գաղտնի համաձայնագիր մըն էր Ա. Համաշխարհային պատերազմին ընթացքին, կնքուած՝ Մեծն Թրիտանիոյ եւ Ֆրանսայի միջեւ, Կայսերական Ռուսաստանի հաւանութեամբ, որ կը միտեր Օսմանեան Կայսրութեան մասնատման: Այս համաձայնութեան հետեւանքով Թուրքական վերահսկողութեան տակ գտնուող Սուրիայի, Իրաքի, Լիբանանի եւ Պաղեստինի երկրամասերը բաժնուեցան Ֆրանսայի եւ Թրիտանիոյ միջեւ:

Օանակցութիւնները սկսած էին 1915 Նոյեմբերին եւ վերջնական համաձայնութիւնը կոչուեցաւ գլխաւոր քանակողներու անուններով՝ Արիտանիոյ կողմէ Սըր Մարք Սայքս իսկ Ֆրասայի կողմէ Ֆրանսուա Շորժ-Փիքո: Համաձայնութեան ներկայ էր նաև Սերկեյ Տիմիդրիեիշ Սավանով որպես Ռուսաստանի ներկայացուցիչ եւ որպես երրորդ անդամը Անտանտի նոեակին:

Պատմական Ակնարկ.-

Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին Մեծն Ռիտանիոյ, Ֆրանսայի և Ռուսաստանի քաղաքական շրջանակներուն մօտ հարց առաջացաւ որ եթէ պատերազմի պատճառով Օսմանեան տարածքները մասնատուին ապա ի՞նչ ճակատագիր կրնար ունենայ «Երրոպայի հիանդ մարդ»։ Այնուհետեւ,



Անտանտի Եռեակը առաջ շարժեցաւ տարածքաշրջանի իր շահերու ամրապնդման: Ան Մարտ 1915-ին կնքեց Կոստանդնուպոլսոյ Համազայնութիւնը՝ ըստ որուն Ռուսաստանին պիտի տրուեր Կոստանդնուպոլիսը իր շրջակայ տարածքներով, որպէսզի Ռուսաստանը անխափան հնանապարի ունենայ դեպի Սիցերկրական Ծով: Մինչ այդ, Ֆրանսա Սուրբոյ մեջ ուներ տնտեսական ներդրումներ եւ ռազմավարական յարաբերութիւններ, մասնաւրաբար Հալեպի շրջանին մեջ: Իսկ Մեծն Թրիտանիան կ'ուզեր ապահով միջանցք դեպի Հնդկաստան՝ Սուլեյման Սեղուցով եւ Պարսիկ Ծոցով: Սիհաւսիկ Մեծն Թրիտանիոյ եւ Ֆրանսայի այս տարածաշրջանի վերոնշեալ շահերը նկատի առնելով է որ կայսցաւ Սայրս-Փիրոյի Համազայնագիրը:

Համաշայնագրի կարեւոր կետերն եին հետեւեալները.-

1- Ուսաստան պիտի տիրանայ Հայկական Երվում, Տրապիզոն, Վան եւ Պիթլիս նահանգներուն, նեռարելով կարգ մը Քրտական տարածքներ հարաւարեւելեան շրջաններուն մէջ:

2- Ֆրանսա պիտի տիրանայ Լիբանանի եւ Սուրիոյ ծովեկերեայ շրջաններուն, Ատանային, Կիլիկիոյ Այնթապ, Ուրֆա, Մերտին, Տիգրանակերտ եւ Սուսուլին:

3- Մրիտանիան պիտի տիրանայ հարաւային Սիօնագետքին նեռաբելով Պաղտատը եւ Սիօներկրականեան ծովափնեայ քաղաքներ Հայֆայի եւ Աքքայի նաւահանգիստները:

4- Ֆրանսական եւ Արիտանական տիրապետութիւններու միջեւ պէտք էր կապմուէին համա-դաշնակցային Արարական պետութիւններ կամ մէկ անկախ Արարական պետութիւն, որ պէտք էր ենթարկուէր Ֆրանսայի եւ Արիտանիոյ ազդեցութեան:

5-Ալեքսանտրէթը պէտք է ըլլայ «ազատ նաւահանգիստ»:

6- Պահեստինը, նկատի ունենալով որպես սրբավայր կարգավիճակը, պետք

ԳԵՐՐԱ ՀԱԼԵՊԼԵՆ

Է ունենայ միջապգային հովանաւորութիւն

Իսկ ըստ Ապրիլ 1917-ին կայացած ՍԵՆ-ԺԱՆ-ՄԵ-Մորիեն Համազայնութեան, Մեծն Ծրիտանիա եւ Ֆրանսա խոստացեր էին հարաւային եւ հարաւարեւմտեան Անաթոլիան յանչնել Իտալիոյ:

Հետագային, Ռուսաստանի որոշումը՝ դադրեցնելու պատերազմական գործողութիւնները, ինքնարերաբար զայն դուրս չգեց Անտանտի Ծռեակէն, նաեւ Սայրս-Փիքոյի իրաւա-քաղաքական եւ տարածքային իրաւունքներէն: Նաեւ, Թուրքիոյ ազգայնական կառավարութեան յաղթանակը, երբ Օսման-եան Կայսրութեան բանակի փլուզումը անխուսափելի էր, հետեւաբար Իտալիոյ խոստացուած Անաթոլիայի ծրագիրն ալ փլուզուեցաւ:

Արաբական աշխարհի սարսափած էր, Սայքս-Փիռոյի Համաձայնութեան հրապարակումն, անոնք նաեւ իրավեկուեցան գոյութիւն ունեցող գաղտնի դաշնագրին: Այս գաղտնի կարգադրութիւնները առաջին հայեացրով հակոսնեայ իրավիճակներու մատնեցին այն խոստումները որոնք Ծրիտանացիները խոստացած էին Հաշեմական Գերդաստանի Հուսէյն Խան Ալիին, Մերքայի կառավարիչին, երբ 1915-1916 Հուսէյն-ՄըրՍահոն համաձայնութիւն գոյացուեր էին որ Արաբները վերջ ի վերջոյ անկախութիւն պիտի ստանային: Հետագային, Յունիս 1916-ին Հուսէյն հաւաքելով Հինավի արաբները ապօստամբեցաւ Շուրքիոյ դեմ:

Հակառակ Սայքս-Փիֆոնի համաձայնութեան, Արիտանայիները ըստ երեւոյթին տակալին կը խոստանային ինքնորոշման իրաւունք տալ արարներուն: Հետեւաբար անոնք օգնեցին Հուսէյնի ժառանգորդ Ֆայսալին որ 1918-ին իր ոյժերով մտնէ Սուրիա եւ Պամակոսի մեջ կառավարութիւն ստեղծե: Իսկ Ապրիլ 1920-ին, Պաշնակից Ոյժերը համաձայնեցան որ տարածքաշրջանը բաժնեն առանձին մանտաթերու, Սան Ռեմոյի վեհաժողովի ընթացքին, ըստ եւրեան շարունակելով Սայքս-Փիֆոնի համաձայնութեան տառը եւ ոգին: Այս մանտաթերու, բաժնեցին արաբական տարածքները, որոնք վերջ ի վերջոյ սահմանագծեցին Ներկայի Իրաքի, Իրավելի, Պաղեստինի, Յորդանանի, Լիբանանի եւ Սուրիայի պետական սահմանները:

Տարածաշրջանը նոր «Սայր-Փիքոյի» մը սեմի՞ն:

Հակառակ որ վերոնշեալ մանտաթներով սահմանուած տարածքները բաւական երկար ժամանակ յետոյ իրականացան Սայրս-Փիրոյի համաչայ-նութենեն ետք, տակաւին մինչեւ մեր օրերը այդ համաշայնութիւնը փխրուն է եւ անկայուն: Համա-արաքական միասնական գաղափարախօսութեամբ ներշնչուած քաղաքական շրջանակներ ընդդիմացան արաքական աշխարհը առանձին պետութիւններու բաժնելու գաղափարին եւ ըստ իրենց այդ մեկը պիտի ծառայէր կայսերապաշտական նպատակներու: Աւելին, սահմաններու բաժանման մեջ ազգային փոքրամասնութիւններ ինչպիսիք են Թիրտերը եւ Տիրպիները, որոնք յայտնուած են այդ պետութիւններու սահմաններուն մեջ, առանց ինքնորոշման կամ ինքնիշխանութեան հեռանկարի: Նոյնիսկ այդ օրերուն Սայրս-Փիրոյի Համաշայնութիւնը ինչպես նաև Հիւեյն-Սըր-Մահոն պայմանաւորուածութիւնը եւ Պալֆուրի Ուխտը (1917) խիստ քննադատութեան արժանացած են, նկատելով անոնց հակոտնեայ վերաբերմունքը Մեծն Թրիտանիոյ եւ Ֆրանսայի խոստումներուն:

Վերոնշեալ ստեղծուած իրավիճակը քաղաքական անկայունութիւն յառաջացնուց կարգ մը արաբական երկիրներու մէջ, ընդհուպ Ծիրտիստանի Շրջանային Կառավարութեան ստեղծումը Իրաքի մէջ 1992-ին եւ նոյնիսկ ոչ հեռու անցեալին՝ 2014-ին Իսլամական Պետութեան ստեղծումը Իրաքի եւ Սուլիիոյ հիւսիսային շրջաններուն մէջ:

Մեր ժամանակներու վերջին տասնամեակին արարական աշխարհին մեջ կատարուած իրադարձութիւնները ինչպէս նաեւ հարաւային Կովկասի մեջ վերջին իրադարձութիւնները, մեկ կը յուշեն մօտալուտ աշխարհաքաղաքան նոր վերադասաւորումներու հանգրուանի մը սկիզբը: ՆՈՐ ԱՐԵՒՆԵԼՔԻ ՍՊ ՔԱՐՏԵՎՈՅ: Հաւանաբար նոր Քիրտիստան մը իրականութիւն դառնայ, բոլոր նախադրեալները կան այդ առնչութեամբ: Այս տարուայ Ապրիլ 24-ի Ամերիկեան վարչախումբի կողմէ Հայոց Ցեղասպանութեան հայանական ճանաչումը, նոր աշխարհակարգի մը սկիզբը կամ մեկնակետը կրնայ նկատիլ, միջազգային ասպարեզներուն մեջ աշխուժացնելով Մերի Պայմանագիրը եւ Ուիլսընեան Իրաւարար Վճիռը, անշուշտ եթէ Հայաստանի Հանրապետութիւնը խիստ է վճռակամ կեցուածք ցուցաբերէ այս յոյժ կարեւոր հարցին նկատմամբ, առանց զիջելու մեր պատմական եւ իրաւարադարական իրաւունքներէն, կիուրելով դիանագիտական ճկունութիւն եւ ռազմավարական դաշնակից չվշտացնելու քաղաքական զգօնութիւն, նկատի առնելով վերջին շրջանին ռուս-թուրքական սերտ համագործակցութիւնը:

ԱՆԻՒՄԱԿԱԾ ԱԿՐՈՎԱԿ ՄՐ

Ո՞Վ ԿԵ ՅԻՇԵ ԳՐԱԳԵՏ ՈՒ ՎԻՊԱԳԻՐ ՀՐԱԶ ԶԱՐԴԱՐԵԱԸ

Ա.

Յատուկ «ՊԱՅՔԱՐ»ին

Սփիտրի ամբողջ տարածքին, յամաքամասէ-յամաքամաս, այսօր քանի՞ հոգի կրնայ շենք բարձրացնել՝ սելու համար, թէ ծանօթ է Հրազ Զարդարեանի անունին: Քանի՞ հոգի կրնայ նշումներ կատարել անոր գրական վաստակին կամ հայաստիացնել մեզ՝ թէ կարդացեր է անոր գիրքերը: Ու վերջապես, քանի՞ հոգի գիտէ՝ թէ Ֆրանսահայ գրականութեան Ա. սերունդի այս տիպար սպասարոր հարացատ վայակն էր նահատակ գրագետ Ռուբեն Զարդարեանի...:

Սրբէն ճի՞շտ 35 տարի սահեր-անցեք է Հրազ Զարդարեանի մահուան թուականնեն:

1986-ին էր: Այդ տարի սփիտրահայ գրականութեան հաստարուն կաղնին ապրեր էր անդարմանեն տերեւաթափ մը: Մեկը միստին եռեւն այս աշխարհին հրաժեշտ տուեր էին Սիմոն Սիմոնեանն ու Արամ Հայկացը, Պետրոս Զարյոնեանն ու Կարո Փօլատեանը, արշակագրուիկ Սոնա Տեր Մարգարեան-Թնկօթեանն ու քատերագիր Մանուէլ Մարութեանը, բանաստեղծ Գառնիկ Մարդարեանը, ու ատոն շարդի՞ Հրազ Զարդարեանը:

Աչքի առջև ունիմ, սա պահուն, Փարիսի երբեմնի «Յանոց» օրաթերթին 31 Մայիս 1986-ի թիւը, ուր Ա. Եջի վրայ, խոշոր գիրքով, կը տրուեր մահուան րօթը ինինամեայ գրագետին, շեշտելով յատկապես՝ թէ ան վերջին տարիներուն ոչ միայն տկարացեր էր Ֆիվիրապես, այև կորսնոցիք էր իր մտրին պայծառութիւնն այ ու այլեւս տխրորէն տպիչ կեանը մը կը քաշըքէր Սեն-Ռաֆայէլի (հարաւային Ֆրանսա) հայկական հանգստեան տան մէջ, հոն՝ ուր իրմէ տոաջ 15 տարի ապրեր ու յետոյ իր վերջին շոնչը փշեր էր Շահան Շահուրը եւս: «Կարեի՞ է կ'ապրի սել մեկոն համար, երբ ան մտովին արդէն ուրիշ աշխարհ մըն է ու յաճախ իր հարպատերն իսկ չի ճանչնար», կը գրէր թերթը դառն ափսոսանքով:

Այո՛, Հրազ Զարդարեանն էր ան: Ռուբեն Զարդարեանի ՇՈՐՍ մանչ վայակներն մին, գրական ճակատի վրայ ալ՝ անոր արժանաւոր յաջորդն ու շառափուն:

* * *

Հրազ Զարդարեանի կենսագրութիւնն պրատողները շատ պիտի զարմանան՝ թէ տեսնեն, թէ ան իսկական թափառականի աստանդական կեանք մը ապրեր է իր մանկութեան եւ պատանութեան տարիներուն: Բայց պիտի պարզուի շուտով, թէ այդ թափառումները պայմանաւոր էին իր՝ Ռուբեն Զարդարեանի ստիպուական ու յաճախակի տեղափոխութիւններով, արդին՞ հայ մտարականի «հայի խնդիր»-ին, բայց նաև՝ անոր հանդէպ Օսմանեան պետութեան կիրարկած հալածական թիւու թաղաքանանութեան: Հետեւաքար, փորդին Հրազ, թէն Խարեւդ ծնած (1897 թ.), սական մանկ տարիքը ակամայ բամելից պիտի դառնար իր հօր նժդեհի կեանքին՝ շարունակ տեղափոխուելով քաղաք-քաղաք, շրջելով դպրոց-դպրոց, Խարեւդին մինչեւ Եկմիան ու Մանիսա (1904), յետոյ Ֆիվիլ-Պուկարիա (ուր Ռ. Զարդարեան պիտի խմբագրեր «Ռապմիկ» անունով եղորեայ թերթ մը, 1905-1908), ապա Պոլիս՝ Էսայեան վարժարան (1909), յետոյ Կարին՝ Սանասարեան գիշերօթիկ վարժարանը, հուսկ կրկին Պոլիս՝ Կեդրոնական վարժարան, ուր իրեն ուսուցիչ կ'ունենար կարկառուն դեմքերու ընտիր փաղանգ մը՝ Դուրեան նշիշէ սրբապան, Լետոն Շանթ, Խնտրա, Հրանդ (Մելրոն Կիրեան), Ռուբեն Սեւակ, Զարդին Խամակ, Ստեփան Էֆ. Կուրտիկեան եւ այլը: Սովորական բախտաւորութեն ատեի՞ն էր ասիկա դպրոցականի մը համար: «Կեդրոնականի մէջ իր աշակերտ ընդունուիլը՝ պիտի գրէր ան տարիներ ետք, - ինքնին տիտղոսի նուիրականացի մը արժեքը ստացաւ:

Ինչպէս ծանօթ է, հայ Զարդարեան 1908-ի Սահմանադրութեան վաղորդանին շատերու նման դարձեր էր Պոլիս, ուր իրեն վստահուեր էր Ռաշնակցութեան «Ապատամարտ» օրաթերթի խմբագրապետութիւնը: Մտարական եռուն շրջան մըն էր տահիկա ամբողջ պղոսահայութեան համար, որ կ'ապրեր «Ապագային գինութիւն» աննախընթաց շրջան մը՝ կուսակցութիւններով, մամուլով, գրական ու կրթական վերերով եւ այլապէս: Հրազ 15 տարեկանի շորը էր այդ օրերուն եւ բախտը կ'ունենար, դպրոցին անկախ, անշամբ ու մօտեն ճանչնալու այն եպակի դեմքերը՝ որոնք յաճախ կ'այցելէին իրենց ընակարանը, - Դանիէլ Վարուժան, Սիմաննար, Գրիգոր Զօհրապահ, Կոմիտաս, Արմենակ Շահմուրատեան, Վուամեան, Շահրիկեան, Ակնունի եւ այլն, եւ այլն: Դեռ կային այն միաները, պորս կը տեսնէր «Ապատամարտ»-ի խմբագրատան մէջ, ատեն-ատեն:

Կը պարզուի ուրեմն, թէ ինչպիսի գաղափարական պատրաստութեան ենթահոդի մը վրայ հասակ կ'առներ Հրազ, կը լիցարուիր պագախն շոնչով ու անզգալար կը համակուեր գրական տեղովով: Մեծանուն դեմքերէ ստացած իր տպատրութիւնները խորապէս կը դրոշմուին պատանիի իր անյագ ու կոյս հետարքութեանց պատառին վրայ:

24 Ապրիլ 1915-ը ամեն ինչ գլխիվայր կը շրջէր անշուշտ:

Կը սկսէր Մեծ Եղենը: Ռուբեն Զարդարեանն ալ առաջին շերբակալուութեան մին կ'վարա: Կը գրաւին անոր բոլոր շենագրերը ու վիճակին Այսէ: Յետոյ կ համար սպամութեան գոյժք..:

Մինչ այդ, Հրազ անցեր էր Կովկաս եւ ուսումը կը շարունակէր Շեհիլիսի Ներսիսան վարժարանին մէջ: Աեկի ուշ՝ մէկական տարինով պիտի աշակերտէր էշմիածնայ Գեղրդեան ճեմարանին ու Ներսանի թեմական դպրոցին: Այս ուրութույտ ճանապարհներուն վրայ՝ ան կ'ապրէր ելեւներով ու փորչութիւններով իհ կեանք մը, որ պիտի շեւատրէր իր ապագայ աշխարհայեացըն ու հոգեկան-իմացական նախափորւթիւնները, մանաւանդ որ ամեն բայափոխի՝ երեւելի դեմքերով շրջապատած պիտի տեսնէր ինքպին:

Կարճ շրջան մը առիթ պիտի ունենար վրադելու նաեւ հրապարակագրութեամբ՝ թէր 1917-ին, Թիֆլիսի մէջ, զօր. Անդրանիկ պիտի սկսէր հրատարակել «Հայաստան» օրաթերթը: Ասգային հերոսին սեփական օրկանն էր այս, նուիրուած՝ արեւմբտահայ դատին: Խմբագրի նշանակութեան վրայ՝ ան կ'ապրէր էլեւներով ու փորչութիւններով իհ կեանք մը, որ պիտի շեւատրէր իր ապագայ աշխարհայեացըն ու հոգեկան-իմացական նախափորւթիւնները, մանաւանդ որ ամեն բայափոխի՝ երեւելի դեմքերով շրջապատած պիտի տեսնէր ինքպին:

Հրազ, ի վերօն, 1918-ին Կովկասն կ'անցնէր Փարիս, ուր կոյ գային, երկար թափառումներէ ետք, վերջնապէս կայք հաստատէր նաեւ իր տարարախտ մայրն ու երեք եղայրայները: Կը յաճախէր Սեն Լուի լիսեն, յետոյ՝ ատամարտական վարժարանը, կանոնաւոր կը հետեւեր Սորպոնի համալսարանի գրականութեան դասըն-

ԵՇԻՌՆ ՇԱՌՈՅԵՑՄԱՆ

թայրքներուն եւ, իրեւեր ապա ունկնդիր: Արագօրէն կը կապմատորուէր իր մէջ հասուն մտարականը, որ մշտատեր ընթերցողն էր Ֆրանսական գրականութեան ու հետեւորդը՝ անոր ժամանակակի հոսանքներուն: Կը վկայուէր իրեւեր ատամարտոյժ:

Բայական տարիներ եռք է, յիսունականներուն, երբ Հրազ կը հաստատուէր Նիս (հարաւային Ֆրանսա): Այստեղ կը կիրարկել իր ասպարեզը՝ ատամարտութիւնը, մինչեւ եօրանասունականներու կեսերը, երբ հանգստեան կը կոչուէր: Արդէն, Հարաւային Ֆրանսա փոխադրուած էին իր ծերպութեան ապահարական մայրէ արժայացած կայական մէջ արժայացած կայական մէջ:

Ինը ապունացած էր Ֆրանսութիւնի մը հետօն: Չարակ չուներ:

Կ'ըսուի, թէ ընդհանրապէս ապրած է մէկուահ կեանք մը, հեռու՝ զանգուածն եւ հանրային բեմն: Բայց աշխատօրէն աշխատակացած է համ մամուկին: Փարիս գտնուած շահարանին մէջ արդարութիւնի մէջ ապահարական մասն Շահնուրի ստորագրած ընադատական մէկ յօդուածն է, դիմած են թիւր ու կոտուակած Շահնուրը...: Դեպքին կը առաջին կայական պատուածաթերը «Ապագար»-ի 25 Ապրիլ 1936-ի թիւն մէջ: Արարը առիթ տուած է, շուտով, դատապարտումի զանապան խօսքերու:

